24803

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆԻ ԲԱՆՎՈՐ-ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ՑԵՎ. Ձ. Տ. Ս. ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

331.88(47.925)
Ա-89

1932

25 FEB. 2013
[947.925]
Ա-89
24803

Գետիրատի տպարան
Գլավլիտ 7404 (բ)
Պատվեր 982
Հրատ. 2178
Տիրաժ 500

Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արա.ССР
Ա. Մռավյանի անվան
24944-59
(1935-59)

15 JAN 2010

1932 թ.

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆԻ ԲԱՆՎՈՐ—ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կոլպայմանագրերը լրիվ կատարելու մի-ջոցով.—

«Վերջ դնել դիմադրությանը, սրմատա-խիլ անել հավաստագրումը, բարելավել աշ-խատանքի կազմակերպումը, ճիշտ բաշխել ու-ժերը հիմնարկության մեջ և բարձրացնել բանվոր դասակարգի կուլտուրը կենցաղային պայմանները»։

ՍՏԱԼԻՆ

«Կոլեկտիվ պայմանագրերը հանդիսանալով յերկուստեք պարտավորություն արհմիու-թյունների և տնտ. ղեկավարների կողմից իր բո-լոր մասերով պետք է կատարվի վոչ միայն տնտեսական կազմակերպություններին, այլև միու-թյունների միջև կազմակերպված բանվորների կողմից»։

ՇՎԵՐՆԻԿ։

1. Սույն հավաքական պայմանագիրը կնքվում է մի կողմից Հայաստանի տպագրական բանվորների Արհմիության Պետհրատի կոլեկտիվների միասյալ դործարկոմի նախագահ Արտաշես Գյուլիջանյանի՝ վորպես «պրոֆկազմակերպություն» և մյուս կողմից՝ Պետական Հրատարակչության վարիչ՝ Եղվարդ Զոփուրյանի ու տպարանի դիրեկտոր՝ Սերգո Փարսադանյանի միջև՝ վորպես «ձեռնարկություն», հետևյալի մասին.

2. Սույն կոլպայմանագրի հիմնական նպատակն է ապահովել Պետհրատի տպարանի հնգամյակի 4-րդ, ավար-

տական տարվա, ինչպես նաև Պետական Հրատարակչության 1932 թ. արտադրական–տնտեսական և ֆինանսական պլանների կատարումն ու ղեկավարումը: Առաջադրանքներ, վորոնք դրված են բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների առաջ ժողովրդական տնտեսության, սոցիալիստական վերակառուցման, յերկրի ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և ընկ. Սալինի պատմական վեց ցուցմունքների լիակատար իրականացման հիման վրա, ապահովել բանվոր դասակարգի նյութական և կուլտուր–կենցաղային վիճակը հետագա ու անչեղ բարելավումը:

Ցելնելով վերոհիշյալից, Պետհրատի վարչությունը, Տպարանի դիրեկցիան, գործարկոմը, բանվոր–ծառայողները ու ՃՏՄ–ն պարտավորություն են ստանձնում լրիվ կերպով կատարել 1932 թ. արդֆինպլանների քանակական և վորակական ցուցանիշները և բանվորության կողմից առաջադրված ու տնտմարմնի կողմից ընդունված հանդիպական պլաններից բղխող առաջադրությունները:

1. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

3. Կոլպայմանագիրը կնքվում է փոխադարձ պարտավորությունների կատարման հիմունքներով և կողմերը պարտավորվում են ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի առնվազն 100 տոկոսով կատարվի ընդունված պլանների հետևյալ հիմնական ցուցանիշները.

ա) տալ տարեկան ընդհանուր արտադրանք 1·511·517 ռուբլի (1931 թ. 1·188·990 ռ. դիմաց).

բ) բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը 24,1 տոկոսով (1931 թ. համեմատ).

գ) բարձրացնել բանվորների միջին աշխատավարձը 10,1 տոկոսով (1931 թ. միջինի համեմատությամբ).

դ) իջեցնել արտադրանքի ինքնարժեքը 7,5 տոկոսով.

յե) բանուժի թվական աճումը 375 մարդ (1931 թ. 332-ի դիմաց):

4. Կողմերը պարտավորվում են 3–րդ կետում ընդունված առաջադրանքները կատարել միանձնյա ղեկավարությունն ու տնտհաշվարկն անչեղորեն և հաստատուն կերպով կիրառելու, աշխատանքի մեքենայացման, աշխատանքի պրոցեսների կանոնավոր կազմակերպման, աշխատանքի պրոլետարական դիսցիպլինան ուժեղացնելու, բրիգադները անտհաշվարկի փոխադրելու, աշխատավարձի հավասարեցումը վերացնելու, դիմադրություններ հիմնովին արմատախիլ անելու միջոցով, վառելանյութի, եներգիայի, մետաղի, հում նյութերի, թղթի, ներկերի և այլնի ոգտագործման ասպարիզում խնայողության խիստ ռեժիմ մտցնելու, ներքին ռեսուրսները և արտադրության տեխնիկական կարողությունն առավելագույն չափով հայտաբերելու և ոգտագործելու միջոցով:

5. Ցելնելով արդեն աշխատանքի մեթոդ դարձած սոցմրցման ու հարվածայնության նշանաբանից, Պետհրատի բանվոր–ծառայողները և ՃՏՄ–ի անդամները՝ վորպես հարվածայիններ, պարտավորվում են վերջ տալ ուշացումներին, հոսունությանը (ինքնամրցման միջոցով), պայքարել սիմուլյացիայի, պրոդուլների և կեղծ հարվածայնության դեմ, և՛ ավելի ուժեղացնել հարվածային տեմպերը, կատարելով ներքին կանոնադրությամբ ընդունված բոլոր կետերը:

6. Պետհրատի բանվոր–ծառայողները Ցերևանի փակկոոպերացիայի (ՁԵՐԿ) աշխատանքներն ուժեղացնելու և բանվորական մատակարարումը կանոնավորելու համար պարտավորվում են բանվորական բրիգադների միջոցով խիստ հսկողություն սահմանել տպարանի փակ ճաշարանի, բուֆետի, փակ խանութի, կոչի վերանորոգման արհեստանոցի և այլնի աշխատանքների վրա, միաժամանակ իր ժամանակին մուծել կոոպերացիայի փայավճարները:

Ծանոթություն.— Տպարանի դիրեկցիան և գործարկոմը պարտավորվում են միջոցներ ձեռք առնել տպարանի բոլոր բանվորներին, արտադրության մեջ աշխատող ծառայողներին և առաջ քաշվածներին կցելու փակ խանութին և ճաշարանին:

2. ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Արդֆինպլանի 100 տոկոսով կատարումը ձեռնարկության կողմից ապահովելու համար, տպարանի ադմինիստրացիան պարտավոր է ժամանակին միջոցներ ձեռնարկել, վորպեսզի ճիշտ կազմակերպվեն արտադրության պրոցես-

ները, հիմք ունենալով անտառաշվարկն ու սոցսայլիոնալացումը, ձեռնարկությունն ապահովել հում նյութով (նյութ, թուղթ, ներկ, տաբեր, գործիքներ, վառելանյութ և այլն)։

8. Մինչև հունվարի 30-ը (32 թ.) արդիֆիկացիաներն իր հիմնական ցուցանիշներով պետք է հասցված լինեն ցեխերին, դաշտագործներին և անհատ բանվորներին։

Ծանոթություն.—Պլանների կատարման և սոցմրցման արդյունքների մասին ամենօրյա տեղեկատվությունը 15 որը մեկ անգամ ցեխերի ժողովներում, բրիգադներում, արտխորհրդակցություններում և կամ կոլեկտիվի ժողովներում պարտավորվում է տալ առանձին դեկուցումներ։

9. Մշտական վերահսկողություն սահմանել տպարան մտնող բոլոր տեսակի ապրանքների՝ թղթի, ներկերի, մեքենաների, գործիքների և այլ տեսակի նյութերի վորակի վրա, նշանակելով այդ գործի համար հատուկ պատասխանատու անձ։ Վատորակության դեպքում մատակարարող որգանների դեմ խիստ միջոցներ ձեռք առնել և այդպիսիների հարցը հանձնել դատախազության (համաձայն անտառաշվարկի նկատմամբ գոյություն ունեցող որենքների)։

10. 1932 թ. հունվարի մեկից կիրառել աշխատավարձի պրոգրեսիվ-պրեմիալ գործավարձային սիստեմը և դրանով վերացնել ցեխերում հավասարեցումը։

Ծանոթ.— Պրոգրեսիվկան կիրառելիս կողմերը պարտավոր են ղեկավարվել այդ առթիվ մշակված հատուկ կանոններով և սիստեմով։

11. Սիստեմատիկաբար կատարել հատուկ հաշվառում սոցմրցման և հարվածայնության արդյունքների մասին, պահել տպարանի արտադրական խորհրդակցությունների վորոշումների և առաջարկությունների հաշվառման հատուկ մատյան, այդպիսիները կատարել առանց ձգձգումների՝ այդ աշխատանքները հանձնելով հատուկ մարդու։

12. Հարվածայինների պարգևատրման ֆոնդն ոգտագործել առանձին ցեռամսյակների պլանների կատարման արդյունքները պարզելուց հետո, ֆոնդի ոգտագործումը թույլատրվում է արտադրական խորհրդակցության և գործարկոմի համաձայնությունից հետո։

13. Ամեն կերպ ոժանդակել աշխատանքը կազմակերպելու սոցիալիստական ձևերի տարածմանը (հարվածային բրիգադներ, որինակելի արտադրանքի բրիգադներ, անտառաշվարկի բրիգադներ, ցեխային և հերթային հանդիպական-պլան-ոպերատիվ խմբակներ և այլն)։

14. Տպարանի ադմինիստրացիան պարտավորվում է ամեն որ գործարկոմին և ցեխային կոմիտեներին ներկայացնել ցեխերի առանձին բաժինների և տպարանի պլանների կատարման վորակական և քանակական ցուցանիշները։

15. Ամեն կերպ նպաստել բանվորների հասարակական սննդի, բնակարանային դրության և կուլտուր-կենցաղային վիճակի բարելավմանը։

3. ԲԱՆՎՈՐ-ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՅԵՎ ՃՏՍ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Պետհրատի տպարանի բանվոր-ծառայողները և ՃՏՍ-ի անդամները պարտավորվում են.

ա) կատարելապես վերացնել հարգելի պատճառներ չունեցող պարապուրդները, վերացնել պրոգուլները, առավելագույն չափով բեռնավորել աշխատանքի որը, լավացնել արտադրանքի վորակը, բարձրացնել դիսցիպլինան՝ պլանները կատարելու և դերակատարելու համար.

բ) սարքավորման ու գործիքներին խնամքով վերաբերվել, խնայողությամբ ոգտագործել այն, թույլ չտալով վոր այդպիսիների ոգտագործումը դերազանցի պլանով ընդունված չափերը.

գ) տպարանի ծառայողները և հաշվապահության աշխատավորները պարտավորվում են իրենց աշխատանքների թերությունները անմիջապես վերացնել, ժամանակին տալ պլանների կատարման վորակական ու քանակական ցուցանիշները, հաշվապահական գործերը յուրաքանչյուր ամսի և կվարտալի վերջին ժամուրի բերել և ամեն ամսի 5-ին տալ նախորդ ամսվա արտադրության ինքնարժեքը.

դ) ակտիվ կերպով մասնակցել արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին, բացի այդ, ՃՏՍ-ի անդամները և վորակյալ բանվորները պարտավորվում են իրենց փորձն ու գիտելիքները սովորեցնել բանվորական նոր կադրերին։

յե) պրոֆմիությունի անդամները պարտավորվում են որինակելի լինել սուրբ հավաքական պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման մեջ։

4. ԳՈՐԾԱՐԿՈՄԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Պետհրատի միացյալ գործարկոմը պարտավորվում է հատուկ հսկողություն սահմանել կողմերի կողմից վերցրած պարտավորությունները ժամանակին կատարելու և այդ պարտավորություններին անմիջականորեն ոգնելու և ոժանդակելու: Ցերեք ամիսը մեկ անգամ կազմակերպել մասսայական ստուգում՝ պայմանագրի անշեղորեն կիրառումն ապահովելու համար:

18. Արտադրական խորհրդակցությունների աշխատանքները հիմնովին վերակառուցել և աշխուժացնել մինչև 1932 թ. փետրվարի մեկը և սիստեմատիկաբար արտխորհրդակցություններում քննության առնել պլանների կատարմանը խոչընդոտ հանդիսացող բոլոր այն խնդիրները, վորոնք կառաջանան ցեխերում, կամ ախատանքի այլ պրոցեսներում:

19. Գործարկոմը պարտավորվում է ոժանդակել դիրեկցիային մինչև 1932 թ. փետրվարի մեկը պլանները մասսայականացնելու, հանդիսական պլաններ կազմելու և այն մինչև անհատ բանվորները հասցնելու համար:

20 Գործարկոմը հանձն է առնում բանվորության սպասարկման գործն այնպես կազմակերպել, վորպեսզի բանվորը շատ ժամանակ չկորցնի, մատակարարվի անհրաժեշտ մրթերքներով և ապրանքներով: Դրա համար գործարկոմը պետք է ուժեղացնի բանվոր-բրիգադների հսկողությունը փակ կոոպերացիայի (ԶԵՐԿ) աշխատանքների վրա:

21. Գործարկոմը և ցեխկոմները պարտավորվում են կազմակերպել լավագույն հարվածային բրիգադներ, արտադրական խմբակներ, ոնոհաշվարկի բրիգադներ և իրենց սիստեմատիկ ու կոնկրետ ղեկավարությամբ ապահովել նրանց հետագա աշխատանքները:

22. Գործարկոմը պարտավորվում է ՃՏՍ-ի անդամների միջոցով տեխնիկական ոգնություն ցույց տալ հարվածային բրիգադներին և մրցող բանվորներին: Ապահովել բանվորների, ՃՏՍ-ի անդամների և դիրեկցիայի մասնակցությունն արտխորհրդակցություններին, գլխավորելով բանվորների շարժումը և ակտիվությունը տեխնիկան տիրապետելու գործում: Գործարկոմը պարտավորվում է իր հերթին սոցմրցման ու հարվածայնության ամենորյա հաշվառում կատարել, վորի միջոցով հրապարակ հանել կեղծ հարվածայիններին ու պրոգուլչիկներին:

23. Գործարկոմը հանձն է առնում դիսցիպլինան ուժեղացնելու, հոսունության դեմ պայքարելու և հարվածայնությունն ու սոցմրցումն ել ավելի խորացնելու համար, ձեռնարկել բոլոր միջոցները և այդ ուղղությամբ մոբիլիզացիայի յենթարկել պրոֆակտիվին և վողջ բանվոր-ծառայողներին, միաժամանակ հասարակական ազդեցության ու ընկերական-արտադրական դատարանի միջոցով պայքարել պրոգուլչիկների, սիմուլյանտների և չվոդների (լեռունների) դեմ:

5. ԿՈՒԼՏՈՒՐ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ

24. Գործարկոմը պարտավորվում է կազմակերպել ռուսաց լեզվի խմբակներ, անգրագետ-կիսագրագետների համար: Միաժամանակ գործարկոմը հանձն է առնում ակումբի աշխատանքները վերակառուցել այնպես, վոր ակումբը կարողանա սպասարկել բանվոր-ծառայողների կուլտուրական պահանջներին, ակումբում կազմակերպելով գրադարան-ընթերցարան, դրամխումբ, ֆիզկուլտ խմբակ, յերաժշտական սեկցիա, շախմատի խմբակ, ՄՈՊՐ-ական և ռազմական անկյուններ:

25. Պետհրատի վարչությունը և տպարանի դիրեկցիան պարտավորվում են 1932 թ. ընթացքում ավարտել 1931 թ. սկսված բանվորական բնակարանի յերկրորդ մասի կառուցումը, բացի այդ՝ ոժանդակել «Տպագրիչ» բնակշինկոոպ ընկերությանը՝ 32 թ. ընթացքում նույնպես կառուցելու և ավարտելու «Տպագրիչ» բնակշինկոոպի 3-րդ շենքը, վորպիսին հատկացնել բնակարանազուրկ բանվոր-ծառայողներին:

26. Պետհրատի վարչությունը հոսունությունը վերացնելու, բանվորությանն արտադրության հետ կապելու և բնակարանի պակասը մեղմացնելու նպատակով պարտավորվում է 32 թ. ընթացքում կառուցել բանվորական եժանագին շենքեր:

27. Դիրեկցիան պարտավորվում է 32 թ. ընթացքում տպարանին մոտիկ վայրում ձեռք բերել յերկու սենյակ և այն հատկացնել գործարկոմին՝ մանկամսուր կազմակերպելու համար:

28· Տպագրիչների Միության Կենտվարչությունը և Պետհրատի վարչությունը պարտավորվում են 1932 թ· տպարանին կից կառուցելու առանձին մեծ ակումբ (Տպագրիչների տուն)՝ 500 հոգի տեղավորող դահլիճով: Ակումբը միաժամանակ պետք է ունենա առանձին սենյակներ, գրադարան, ընթերցարան, ռազմական խմբակների, խաղերի, կուսպրոֆխմբակների պարապմունքների, յերաժշտական և չախմատային խմբակների համար· միաժամանակ ակումբում պետք է լինի առանձին ֆիզկուլտուրայի սրահ:

Ծանոթություն·—Տպագրիչների տան կառուցման համար աբմողջ ծախսերի 30 տոկոսը տալիս է Միության Կենտվարչությունը և 70 տոկոսը Պետհրատի վարչությունը՝ վորպես տնտմարմին:

29· Բանվորական բնակարանի յերկրորդ չենքում մանկապարտեզին հատկացնել յերկու մեծ սենյակ և 32 թ· ուս· տարում կազմակերպել մեկ խմբակ ևս բանվորների յերեխաների համար:

Ծանոթություն 1·—Մանկապարտեզի 2-րդ խումբը պետք է իր աշխատանքներն սկսի 32 թ· դպրոցական տարվա սկզբից և ձեռնարկությունը պարտավորվում է հոդալ մանկապարտեզի տաքացման, լուսավորության ծախքերը:

2· Գործարկումը պարտավոր է մանկապարտեզի համար գնել մեկ դաշնամուր:

30· Տպարանի դիրեկցիան պարտավոր է հատուկ պայմանագիր կնքել փակ կոոպերացիայի (ԶԵՐԿ) հետ ճաշի վորակը լավացնելու, հերթերը վերացնելու և փակ բաշխիչի սպասարկումը կանոնավորելու համար:

31· Պետհրատում տպագրված բոլոր տեսակի գրականությունից մեկական որինակ հատկացվում է ակումբին կից գրադարանին:

Ծանոթություն 1.—Պետհրատում տպագրված բոլոր տեսակի գրքերից և ժուրնալներից բանվորներն ստանում են զեղչված գներով՝ գործարկումի միջոցով՝ մեկական որինակ:

2· Թերթերի վրա աշխատող բանվորներին, որբագրիչներին տրվում է մեկական որինակ թերթ, ձեռնարկության հաշվին:

32· Գործարկումի համար ձեռնարկությունը հատկացնում է առանձին դրասենյակ իր բոլոր հարմարություններով, միևնույն ժամանակ հոդալով նրա տաքացման, լուսավորման և հեռախոսի ծախքերը:

33· Ձեռնարկությունը գործարկումի պահպանության համար հատկացնում է բաժանված բոլոր տեսակի աշխատավարձի մեկ ու կես տոկոսը:

34· Ձեռնարկությունը բանվոր-ծառայողների կուլտուրական պահանջները հոդալու համար հատկացնում է բոլոր տեսակի աշխատավարձի մեկ ու կես տոկոսը:

Ծանոթություն·— Գործարկոմական և կուլտուրակրթական տոկոսների հատկացումները կատարվում են վոչ ուշ աշխատավարձը բաժանելուց 5 որ հետո:

35· Ադմինիստրացիան պարտավորվում է բանվորների կողմից արված գյուտերը և արտադրությանը վերաբերող առաջարկները քննության առնել յերեք որվա ընթացքում:

36· Այն գյուտարարի առաջարկությունը, վորը կընդունվի արտադրական խորհրդակցության գյուտերյուրոյի և ադմինիստրացիայի կողմից, գյուտարարական ֆոնդից տրվում է նրան պարգև և գյուտը պատրաստելու համար անհրաժեշտ դումար՝ համաձայնեցնելով այն գործարկոմի հետ:

37· Պետհրատի վարչությունը պարտավոր է հոդ տանել, վոր տպարան ուղարկվելիք բոլոր տեսակի նյութերի բնագրերը՝ լրագրերի, ժուրնալների, գրքերի, բրոշյուրների և այլն, լինեն մաքուր, պիտանի ընթերցանության համար, առանձնապես հատուկ անուններն ու թվերը պարզ գրված, մեքենագրված և վերջնականապես խմբագրված: Սրբագրատանը պետք է լինեն քարտեղներ, որացույցներ, բառարաններ և այլ ուղեցույցներ, ինչպես և պահարաններ՝ բնագրերը պահելու համար:

38· Արտադրությունից պրոդուլների, սիմուլյացիայի, փչացումների, լեռունության, հարբեցողության, մեքենաների ջարդման և անդիսցիպլինարության հետևանքով հեռացվածները վտարվում են իրենց գրաղեցրած բնակարաններից արձակված որից 3 որ հետո:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՆ ՈՒ ԱՐՁԱԿԵԼԸ

39. Ձեռնարկության ադմինիստրացիան պարտավորվում է աշխատանքի ընդունել առաջին հերթին տպարանի բանվոր-ծառայողների յերեխաներին և ճանկատան սաներին, բացառությամբ թերթերի վորակյալ աշխատողների ու մասնագետների, վորոնց ընտրությունը կատարում է վարչությունը:

Ծանոթություն 1.— Ֆաբգործուսում և ֆելիերում մեծաքանակ ընդունելությունները վարչությունը կատարում է կոլտնտեսությունների, կամ աշխարամիների հետ հատուկ պայմանագրեր կնքելու միջոցով:

2. Բոլոր տեսակի աշխատողների ընդունելության դեպքում, ադմինիստրացիան պարտավոր է մեկ որվա ընթացքում հայտնել գործարկոմին: Գործարկոմին իրավունք է վերապահվում յուրաքանչյուր նոր ընդունվող բանվոր-ծառայողի նկատմամբ հիմնավորված բացարկ տալու մեկ որվա ընթացքում, յեթե ադմինիստրացիան, կամ վարչությունը գործարկոմի հետ չեն համաձայնվում, այն դեպքում հարցը լուծվում է կոնֆլիկտային կարգով:

40. Կանանց արտադրության մեջ ներգրավելու համար 32 թ. ընթացքում դիրեկցիան պարտավոր է աշխատանքի ընդունել 80 կին:

41. Փորձնական ժամանակամիջոցը բանվորների համար սահմանվում է աշխատանքային 6 որ, ծառայողների համար՝ 12 որ, վորի ընթացքում ադմինիստրացիան վորոշում է նրա ընդունակությունը և աշխատավարձի չափը: Հիշյալ ժամանակամիջոցից ավելի պահվածներն անցնում են Պետհրատի հատիկի մեջ:

Ծանոթություն.— Լինոտիպում ընդունվածների փորձնական ժամանակամիջոցը սահմանվում է մեկ ամիս:

42. Աշխատենգրքի 47-րդ հոդվածի ա և յե կետերի հիմունքներով հատիկի կրճատելը և արձակումը կիրառվում է գործարկոմի և միության նախնական համաձայնությամբ:

Ծանոթություն.— Տպագրիչների Արհմիության

կենտավարչության և գործարկոմի անդամների կրճատման հարցը նախորոք պետք է համաձայնեցվի գործարկոմի և կենտավարչության հետ:

Արձակման դեպքում.

ա) բոլոր դեպքերում արձակման յենթարկված աշխատակիցները փաստորեն աշխատանքից ազատված են համարվում լրենց հասանելիքներն ստանալուց հետո:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԵՐԸ

43 Պետհրատի տպարանում աշխատանքի տևողությունը սահմանվում է 7 ժամյա բանվորական որով:

Ծանոթություն.—Տպարանի ծառայողներն աշխատում են 6 և կես ժամ (հաշված հանգստի կես ժամը):

44. Տպարանում առաջին և յերկրորդ հերթի աշխատանքները կատարվում են 7 ժամով, 3-րդ հերթի աշխատանքները՝ 6 ժամով: 6 ժամ աշխատում են նաև ցինկոգրաֆիայի տրավելչիկները:

Ծանոթություն 1.— Այն բանվորները, վորոնք աշխատում են առաջին և յերկրորդ հերթին՝ կատարելով գործարքային աշխատանք, 3-րդ հերթի փոխադրվելիս մեկ ժամ պակաս աշխատելու դիմաց ստանում են հատուցում՝ համաձայն Աշխատենգրքի 69-րդ հոդվածի: Գիշերային աշխատանքի ամեն մի ժամի համար վարձը համապատասխան չափով ավելանում է: Գիշերային մի ժամը վարձատրվում է, ինչպես ցերեկվա մի ժամի $^{8}/_{7}$-ականը (հոդված 95):

2. Գործաավարձով աշխատելիս՝ բանվորներն այդ դեպքում, բացի գործավարձի հաշվով ստացված աշխատավարձից, ստանում են գիշերային աշխատանքի ամեն մի ժամի համար իրենց կատեգորիայի ժամավարձի $^{1}/_{7}$-ականը կամ $^{1}/_{5}$-ականը (հոդված 94-95):

3. 3-րդ հերթին չի թույլատրվում աշխատել անչափահասներին:

45. Գիշերային աշխատողների համար հիմնարկությունը պարտավորվում է հատկացնել առանձին սենյակներ, վորտեղ հնարավոր լինի հանգստանալ մինչև աշխատանքի անցնելը, կամ աշխատանքից հետո՝ մինչև տուն գնալը:

8· ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

46· Պետհրատի տպարանի բոլոր բանվորները և վարչա-տեխնիկական անձնակազմն աշխատավարձ են ստանում ժամավարձային սիստեմով: Ամսական աշխատանքի ժամերը հաշվվում են 175 ժամ և աշխատավարձը բաժանվում է սրբյալ ժամերի վրա ու դուրս է բերվում մի ժամավարձը:

Ծանոթություն.— Ժամավարձով աշխատավարձ են ստանում տպարանի դիրեկտորը, տեղակալը, վարիչները, ռացիոնալիզատորները, տեխնարուկը, կազրերի և մյուս բաժինների վարիչները, դրասենյակային ծառայողները:

47· 1932 թ. հունվարի մեկից տարիֆային ցանցը վերանայվում է և կիրառվում է աշխատավարձի պրոգրեսիվ-գործավարձային սիստեմը:

Ծանոթություն.— Պրոգրեսիվ – գործավարձային սիստեմը կիրառելիս միաժամանակ վերանայվում են բոլոր ցեխերի նորմաները:

48· Ձեռնարկության մեջ գոյություն են ունենում հետևյալ 2 տարիֆային ցանցերը.

ա) աշակերտական, վորոնց առաջին կարգի համար վորոշվում է ամսական 25 ռ. 84 կ., իսկ մի ժամվանը՝ 14,8 կոպ.: Հետագա կարգերի դրույքները սահմանվում են 4 կարգանոց ցանցով 1:1,9 հարաբերականով.

Կարգ	Կոեֆիցիենտ	մի ժամվա	որվա	ամսական
1	1	14,8	1–03	25–84
2	1,2	17,8	1–24	31–00
3	1,5	22,2	1–55	38–76
4	1,9	28,1	1–86	46–04

բ) բանվորական, վորոնց առաջին կարգի համար վորոշվում է ամսական 36 ռ. 92 կ., իսկ մի ժամվանը՝ 21,1 կ., հետագա կարգերի դրույքները սահմանվում են 8 կարգանոց ցանցով՝ 1:2,8 հարաբերականով.

Կարգ	Կոեֆիցիենտ	մի ժամվա	որվա	ամսական
1	1	21,1	1–48	36–92
2	1,2	25,3	1–77	44–30
3	1,45	30,6	2–04	53–53
4	1,7	35,9	2–51	62–76
5	1,95	4[illegible],[illegible]	3,08	71–98
6	2,2	46,4	3–25	81–22
7	2,5	52,7	3–69	92–20
8	2,8	59,1	4–14	103–38

49· Աշխատավարձի գործավարձային և բոլոր այլ տեսակի վարձատրությունները կատարվում են ամիսը յերկու անգամ բանվորների համար՝ վոչ ուշ ամսի 5–ին և 20–ին, իսկ մյուս աշխատակիցների համար՝ ամսի 1–ին և 16–ին՝ աշխատանքի մոմենտում:

57· Պետհրատում գոյություն ունեցող բոլոր ցեխերի աշխատանքները (բացի դրասենյակից) կատարվում են գործավարձով:

51· Պետհրատի տպարանում գոյություն ունեցող բոլոր ցեխերի գործավարձային նորմաները վերանայվում են և սահմանվում նորը: Նորմաների և գնահատումների վերանայումը, ուր պետք է ապահովվի արտադրողականության և աշխատավարձի բարձրացման նկատմամբ, 1932 թ. պլանով նախատեսված առաջադրանքների կատարումը:

52· Արտադրանքի նորմաները սահմանվում են տեխնիկական չափադրման (խրոնոմետրաժի և բանվորական որվա լուսանկարման) տվյալների հիման վրա՝ տեխնիկապես հնարավոր առավելագույնը, յելնելով ձեռնարկության փաստական պայմաններից՝ հարվածային բանվորի հաշվով:

Ծանոթություն 1.— Պրոգրեսիվ–գործավարձայինը թույլատրվում է կիրառել նորմաների տեխնիկական չափադրումից հետո:

2· Նորմաները սահմանելիս պետք է հաստատել նաև աշխատանքները կատարելու համար մեքենաների ոգտագործող բրիգադայի անհրաժեշտ չտաները:

53· Վերանայվող և նոր սահմանվող գործավարձային նորմաներն ու գնահատումները կատարում է ադմինիստրացիան և հաստատում ԳԿՀ–ն, իսկ այդպիսիք կիրառվում

են հաստատման որից մեկ տարի ժամանակով (հավ. պայմ. գործ. ընթացքում):

54. Ադմինիստրացիան պարտավոր է առանձին պրոցեսների նորմաներն ու գնահատումները մինչև ԳԿՀ-ի հաստատության գալը, հանձնել գործարկումին՝ բանվորական հանձնաժողովներում, բրիգադներում և արտադրական միավորումներում քննելու և մշակելու համար:

Գործարկումին հանձնելուց հետո 10 որվա ընթացքում նորմաները պետք է հաստատվեն ԳԿՀ-ի կողմից: Եթե այդ ժամանակամիջոցում նորմաները ԳԿՀ-ի կողմից հաստատված չլինեն, ադմինիստրացիան դրանք կարող է կիրառել անկախ հաստատումից: Տարաձայնությունները լուծվում են սովորական կարգով:

Նոր սահմանված, կամ փոփոխված նորմաները և գնահատումները պետք է ձեռնարկության մեջ կիրառվեն բանվորներին հայտարարելուց 3 որ հետո միայն

55. ԳԿՀ-ի կողմից չնախատեսած առանձին աշխատանքների նորման և գնահատումները կատարում է ադմինիստրացիան և հայտնում է բանվոր-ծառայողներին մինչև աշխատանքը կատարելը: Աշխատողը գնահատման հետ համաձայն չլինելու դեպքում, վեճը լուծում է ԳԿՀ-ն, այդ մասին ԳԿՀ-ին հայտարարություն արվելուց 24 ժամ. ընթացքում, ըստ վորում բանվորն իրավունք չունի իրեն տրված աշխատանքը դադարեցնել ու չկատարել:

56. Եթե ԳԿՀ-ում նորմաները և գնահատումները հաստատելիս կողմերը համաձայնություն չգան, աշխատանքը պետք է կատարվի ադմինիստրացիայի նշանակած նորմաներով և գնահատումներով: Այդպիսի գործերի համար տրված վճարը համարվում է կանխավճար: Վերջնական հաշվարկը կատարվում է՝ նորմաները կոնֆլիկտային որգաններում հաստատվելուց հետո՝ առաջին վճարի միջոցին:

Ծանոթություն.— Եթե տեխնիկապես հնարավոր չէ գործը գնահատել նախքան բանվորին հանձնելը, ապա այդ դեպքում գնահատումը կատարվում է այն հաշվով, վոր տվյալ չարաթվա ավելորդ աշխատավարձը վճարվի հետագա չարաթվա աշխատավարձի հետ միասին:

57. Պրոգրեսիվ-գործավարձային գնահատումները կատարվում են աշխատանքի ընույթով և աշխատանքը կատարող անձի կարգով (դրույքով):

58. Վերանայված արտադրանքի նորմաները և գործավարձային գնահատումների այս կամ այն ցեխում, կամ տրրողջ ձեռնարկության նկատմամբ կարող են վերանայվել գործարկումի և տնտեսարանի փոխհամաձայնությամբ, միայն այն դեպքում, երբ նորմաների կիրառման ժամանակաշրջանում տեղի ին ունենում կազմակերպչական և տեխնիկական այնպիսի բարեկարգումներ, վորոնք բարձրացնում են բանվորի արտադրողականությունը:

59. Պետական տպարանի բոլոր ցեխերում 4-րդ կատեգորիայի մեջ մտնող աշակերտները պետք է մտնեն գործավարձայինի մեջ:

60. Գործավարձային աշխատանքը կարող է կատարվել թե՛ անհատական, թե՛ բրիգադային և թե՛ կոլեկտիվորեն: Կոլեկտիվ կամ բրիգադային աշխատանքի դեպքում խմբի աշխատավարձը բաժանվում է նրա անդամների միջև ըստ լրենց բանվորական ժամերի քանակի, աշխատանքի ընույթի և սահմանված կադրերի:

Ծանոթություն 1.— Կոլեկտիվի կամ բրիգադայի մեջ մտնողների ընտրությունը կատարում է ադմինիստրացիան:

2. Վերանայվող և նոր սահմանվող գործավարձային նորմաներն ու գնահատումները լայնորեն մասսայականացվում են ցեխերում, արտադրությունների և հաստատվում ԳԿՀ-ի կողմից:

61. Վնասակար արտադրության մեջ բանվորական կրճատված որով աշխատող բանվորների համար գործավարձային գնահատումները կատարվում են նույն ձևով՝ արտադրության նորման բաժանելով նրանց կրճատված բանվորական որվա ժամերի վրա:

62. Արտաժամյանները վճարվում են վոչ թե բանվորի հիմնական դրույքով, այլ նրա փաստացի ստացած գումարով:

63. Գործավարձային աշխատանքների մեջ նորմալ բնական-չափավոր փչացումների համար բանվորի աշխատավարձից վոչինչ չի պահվում:

Ծանոթություն.— Փչացումի չափավոր տոկոսը սահմանում և ադմինիստրացիան և հաստատում է ԳԿՀ-ը:

64. Եթե փչացումի տոկոսը նորմայից բարձր է և կամ եթե փչացումը նախատեսված չէ, այդ դեպքում.—

ա) եթե փչացումը հետևանք է եղել բանվորի անփութության, փչացման արտադրանքը չի վարձատրվում, իսկ նորմայից բարձր փչացածի համար արժեքը հետ է գանձվում բանվորի աշխատավարձից, սակայն այն հաշվով, որ յուրաքանչյուր անգամ գանձվելիք գումարը նրա շաբաթական աշխատավարձի ⅓-ից բարձր չլինի.

բ) եթե փչացումը բանվորի մեղքը չէ, այլ նյութի, գործիքների, վատորակի, այդ դեպքում փչացած ապրանքը **վարձատրվում է համաձայն այդ առթիվ գոյություն ունեցող որենքով սահմանված չափի:**

65. Կատարվող աշխատանքի համեմատ ադմինիստրացիան բանվորներին և ծառայողներին նշանակում է տարիֆային կարգ, համաձայն Համեմիութենական ՏԱԲՄ կենտկոմի կարգադրության տպագրված 1930 թ., բանվորը նշանակված կարգի հետ համաձայնվելու դեպքում հարցը լուծվում է ԳԿՀ—ին տված հայտարարությունների կարգով:

Ծանոթություն.— 1932 թ. ընթացքում, եթե սույն կարգադրությունը ՏԱՄԲ կենտկոմի կողմից փոփոխվեց, այն դեպքում մեխանիկորեն կկիրառվի նրանց կողմից ընդունված նոր կարգադրությունը:

66. Բանվոր-ծառայողների բարձր կարգից իջեցնելը կարող է տեղի ունենալ ԳԿՀ-ի կողմից պարզված հետևյալ դեպքերում.

ա) եթե աշխատանքի վորակը չի համապատասխանում նշանակված կարգին և եթե այդ անպետքությունը պարզվում է սկզբնական կարգի նշանակելուց հետո աշխատանքի ընթացքում.

բ) կարգի իջեցման չհամաձայնվող բանվոր-ծառայողը կարող է արձակվել ընդհանուր հիմունքներով՝ ստանալով 15 որվա միջին աշխատավարձը (Աշխատենագրքի 89-րդ հոդված), ավելի ցածր կարգի փոխվելու համաձայնողը փոխվելու որից 15 որ ստանում է նախկին աշխատավարձը:

67. Ֆարգործուսում աշակերտներն ստանում են աշխատավարձ այն տարիֆներով, վոր կիրառվում է գործարանում աշխատող աշակերտների նկատմամբ:

Ծանոթություն 1.— Պետհրատը պարտավոր է ֆարգործուսի աշակերտների համար ձեռք բերել առանձին հանրակացարան իր հարմարություններով (մահճակալ, սեղաններ և այլն), միաժամանակ հոգալով հանրակացարանի մաքրության, տաքության և լուսավորության ծախքերը:

2. Դիրեկցիան պարտավոր է ֆարգործուս ընդունվող յուրաքանչյուր ուսանողի հետ կնքել հատուկ ինքնակոնտրակտացիոն պայմանագրեր:

9. ԱՇԽՈՒԱՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

68. Տպարանում պետք է ունենալ բավարար թվով լվացարաններ և պահանջված քանակությամբ սապոն:

69. Ձեռնարկությունը պարտավորվում է ֆիզիկական աշխատանք կատարող բանվորներին տալ արտահագուստներ, ղեկավարվելով գոյություն ունեցող նորմաներով:

Ծանոթություն.— 1. Կաթը տրվում է ձուլարանի, ցինկոգրաֆիայի, լինոտիպի, ստերեոտիպի և ռոտացիոնի ու հետագայում նոր բացվելիք վնասակար ցեխերի բանվորներին:

2. Բոլոր դրաշարներին, տպագրիչներին ու կազմարարներին դիրեկցիան պարտավորվում է տալու յուրաքանչյուր աշխատանքի որվա համար մեկական բաժակ կաթ ինքնարժեքով:

3. Բանվորների արտահագուստների ու ֆերեստրիչների լվանալու պարտականությունը դրվում է դիրեկցիայի վրա: (Այն դեպքում, եթե բանվորը չի ցանկանում արտահագուստը հանձնել դիրեկցիային մաքրելու համար, նրան տրվում է 2 ամիսը մեկ անգամ մեկ կտոր սապոն՝ տանը լվանալու համար):

4. Մասնահագուստի փոխարեն դրամական հատուցում չի թույլատրվում:

70. Ձեռնարկությունը պարտավորվում է բոլոր բաժիններում ստեղծել առողջապահիկ պայմաններ:

71. Տեխնիկական անվտանգության համար նախատեսված դրամարկղերն օգտագործել ժամանակին և այդ ուղղու-

ՀՍՍՌ-ԱԳԻ.ՍԳՓ
Ա. Մ. ՑՈՒՄԱՆՅԱՆ

թյամբ Աշխատողկոմատի հետ կնքել տեխնիկական անվտանգության նոր պայմանագիր 1932 թ. համար:

72. Զեռնարկության բոլոր ցեխերում պետք է լինեն դեղարկղներ, անհրաժեշտ դեղորայքով:

Ծանոթություն.— Տպարանին կից ունենալ շտապ ոգնության կայան՝ անհրաժեշտ շտատով:

73. Դիրեկցիան և գործարկոմը պարտավորվում են տարեկան մեկ անգամ բոլոր բանվոր-ծառայողներին յենթարկել բժշկական քննության և կատարել բժ. հանձնաժողովի վրաշումները:

10. ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

74. Համաձայն Աշխատենսգրքի 114-րդ հոդվածի՝ տոնական 5 և կես ամիս անընդհատ աշխատելու դեպքում ստաբանի բանվոր-ծառայողներին արձակուրդ է տրվում տարվա համար բոլորին անխտիր 12 քանոր:

№ №	ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԻՐ	Արձակուրդի տևողություն	Ծանոթություն
1	Գրաշարներին	2 շաբաթ	Սույն ցուցակում նշված 8 ցեխերի բանվորներին տրվում է 15 տարեկան աշխատանքային արձակուրդ՝ համաձայն ԽՍՀՄ Ժող. Կոմիսարների Սովետի 20—21 վերոգ. (Կարգադրություն. 29 թ. հունվարի 1-ի № 78 վերաշխատ.)
2	Տպագրիչներին	2 »	
3	Զուլարանի բանվորներին . . .	2 »	
4	Լինոտիպի և մոնոտիպի գրաշ.	2 »	
5	Ստերեոտիպի բանվորներին . .	2 »	
6	Ցինկոգրաֆիական ցեխի բան.	2 »	
7	Լիտոգրաֆիական ցեխի բան.	2 »	
8	Կազմարարներին	2 »	
9	Տպար. հավաքարարուհիներին.	2 »	
10	Եքսպեդիտոր-ծախսարարն . .	2 »	
11	Գրասենյակային ծառայող . .	2 »	
12	Մեքենագրուհիներին	2 »	
13	Պարեսի, կառապ. ու ձիապան.	2 »	

Ծանոթություն 1.— Այն գրասենյակային ծառայողները, որոնք անմիջականորեն կապված են արտադրության հետ և աշխատում են այնքան, որքան նույն ցեխի բանվորները, նոմոն աշխատակիցները նույնպես ոգտվում են մեկ ամիս արձակուրդով:

2. Տպարանի այն պատասխանատու և փոչ պատասխանատու աշխատակիցները, որոնց աշխատանքային ժամերը չափավորված չեն և աշխատում են 7 ժամից ավելի, այդպիսիները նույնպես ոգտվում են 1 ամիս արձակուրդով:

75. Զեռնարկությունը պարտավորվում է տարեվերջին փակել բոլոր բանվոր-ծառայողների արձակուրդային հաշիվները:

Ծանոթություն.— Արձակուրդները տրվում են տարվա բոլոր ամիսներին:

76. Արձակուրդի իրավունք ունենալու համար, սահմանված ժամկետից շատ արձակվող բանվոր-ծառայողները հաշվեհարդարի ժամանակ ստանում են դրամական փոխհատուցում չոգտագործված արձակուրդի փոխարեն: Մեկ ամիս արձակուրդով ոգտվողներն ստանում են ամսական աշխատավարձի 1—12-ի, իսկ 15 օրով ոգտվողները՝ 1—24-ի չափով:

11. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

77. Անչափահասները ձեռնարկության մեջ կազմում են վորակյալ բանվորների (4-ա) ընդհանուր թվի 10—15 տոկոսը, վորից 30 տոկոսը պետք է լինեն կանայք:

Յեթե կադրերի բաժնում կան ցուցակագրված մեր մի-ության անդամ աշակերտական չրջանը չավարտած անչափահասներ, տղաների անչափահասների տոկոսը լրացվում է 1-ին հերթին հիշյալներից:

Ծանոթություն.— Տպարանի չափահաս և անչափահաս բանվոր-աշակերտների թիվը լրացվում է հարվածային բանվորների և յերկարատև բանվորական ստաժ ունեցողների դասակներից:

78. Աշակերտության վորակավորման համար կիրառվում են կոլեկտիվ, բրիգադային և անհատական ուսուցման մեթոդները, վորոնց մեջ մտնում են 1—4-րդ կարգի աշակերտական ցանցում յեղածները:

79· Պետհրատի վարչությունը և դիրեկցիան գործարկումի ժամանակությամբ պարտավորվում են 1932 թ. հունվար ամսից տպարանին կից բաց անել ֆաբրիկա 60 աշակերտների համար:

80· Գործարկումը պարտավորվում է 32 թ. հունվարի 1-ից յուրաքանչյուր ցեխում կազմակերպել տեխնիկան տիրապետող խմբակներ և դեկավարել նրանց աշխատանքները:

Ծանոթություն.— Տպարանի ՃՏՍ-ն պարտավորվում է յուրաքանչյուր նոր կազմակերպված տեխնիկան տիրապետող խմբակներին տրամադրել հրահանգիչներ և դասատուներ:

81· Վորակավորման և վերավորակավորման համար հաճախակի կենտրոնական քաղաքներ գործուղել ցեխերի աչքի ընկնող հարվածայիններին և ցեխվարներին, նրանց ցուցակը նախորոք համաձայնեցնելով արտադրության և գործարկումի հետ:

82· Ֆաբրիկայի աշակերտները պարտավորվում են բարձրացնել իրենց տեսական և գործնական ուսուցման վորակը, տարբավորմանը, հատուցներին, նյութերին, մեքենաներին և գործիքներին խնամքով վերաբերվել: Մասնակցել ձեռնարկության արտադրական կյանքին (պլաններիր կատարում, ռացիոնալացում, սոցմրցում, հարվածայնություն և այլն):

12· ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԿԱՐԳԸ

83· Տպարանի դիրեկցիան և գործարկումը պարտավորվում են կազմակերպել յերկկողմանի պարտավորությունների ամենօրյա սիստեմատիկ ստուգում: Սույն հավաքական պայմանագիրը խախտում հայտաբերող կողմը պարտավոր և անմիջապես իրագեկ դարձնել մյուս կողմին հիշյալ խախտումը վերացնելու համար:

84· Յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ գործարկումը

և դիրեկցիան կատարում են հավաքական պայմանագրի մասնակցական ստուգում:

85· Սույն հավաքական պայմանագիրը խախտելու համար, կոգմերի դեկավար աշխատակիցներից կոնկրետ պատճառ դարձողները, յենթարկվում են Քրեական պատասխանատվության (համաձայն Աշխատանոգրքի 134-րդ հոդվածի):

86· Սույն պայմանագրի խախտման դեպքում, յուրաքանչյուր բանվոր-ծառայող և ՃՏՍ-ի անդամ կրում են.

ա) դիսցիպլինար պատասխանատվություն՝ ռեժիմացուցակի համաձայն.

բ) հասարակական պատասխանատվություն արտադրական-ընկերական դատարանի առաջ և

գ) վերջին միության անդամ իր արհկազմակերպության առաջ:

87· Սույն պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակով և ուժի մեջ է մտնում 1932 թ. մարտի 1-ից մինչև 1932 թ. փետրվարի 28-ը և տարածվում է ներկայումս աշխատող և թե՛ հետագայում նոր ընդունվող բանվոր-ծառայողների վրա:

Ծանոթություն.— Սույն պայմանագիրը չի տարածվում վարձման, աշխատանքից արձակելու իրավունքով ուժազրկած վարչական կազմի վրա:

88· Պայմանագրի կիրառման ժամանակամիջոցը, կամ պայմանագրի առանձին կետերը փոփոխության կարող են յենթարկվել միայն կոգմերի փոխադարձ համաձայնությամբ:

89· Սույն պայմանագրի կիրառման, կամ նրա մեկնաբանման հոդի վրա ծագած վեճերի և կոնֆլիկտների լուծման համար, Պետհրատում կազմակերպվում է ԳԿՀ: ԳԿՀ-ի կազմակերպման կարգը, նրանց պարտականությունները սահմանվում են հատուկ կանոնադրությամբ:

Ծանոթություն.— 1· Դիրեկցիան և գործարկումը,

ԳԿՀ-ի անդամներին տալիս են համապատասխան լիազորություններ:

2. ԳԿՀ-ի նիստերը կարող են հրավիրվել նաև աշխատանքի մոմենտում: (Նայած գործի անհրաժեշտության):

90. Սույն հավաքական պայմանագրի վնքման ժամանակ, Պետհրատի տպարանում աշխատող բանվոր-ծառայողների թիվն է՝ 446 հոգի:

91. Սույն պայմանագրով չնախատեսված աշխատանքի բոլոր պայմանները կարգավորվում են աշխատանքի այդ մասին գործող օրենքներով:

92. Սույն պայմանագիրը Պետհրատի վարչության հաշվին տպագրվում է և բաժանվում բանվոր-ծառայողներին մեկական օրինակ:

Հայաստանի Տպագրական արդյունաբերության բանվորների Արհմիության Պետհրատի Մշտական Գործարկոմի նախագահ՝ Ա. ԳԾՈՒԼԻԶԱՆՑԱՆ

ՀՍԽՀ Պետական Հրատարակչության վարիչ՝ Ե. ՁՈՓՈՒՐՅԱՆ

Տպարանի դիրեկտոր՝ Ս. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

Սույն պայմանագիրը քննված և հաստատված է Տպագրիչների Միության Կենտկոմի կողմից:

Միության նախագահ՝ Վ. ՍԱՐՈՑԱՆ

Սույն պայմանագիրը հաստատված և տոմարագրված է Աշխատողկոմատի կողմից 1932 թ. ապրիլի 14-ին:

ԽՍՀՄ Աշխատողկոմի տեղակալ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0193114